

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
№ 11/08

Քաղ. Երևան

26 մայիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. մայիսի 26-ի նիստում (արձանագրություն № 61/4) քննարկեց հայտատու՝ Արարատի մարզի կոնյակի գործարան «Ա.Վ.2.» ՍՊԸ-ի 2008թ. մայիսի 20-ի բողոքն ՅՅ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի թիվ 20080052 հայտով ծավալային ապրանքային նշանի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում մերժելու մասին նախնական որոշումը անփոփոխ թողնելու մասին 2008թ. ապրիլի 15-ի կրկնական փորձաքննության որոշման դեմ:

2008թ. ապրիլի 15-ի որոշմամբ կրկնական փորձաքննությունը «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՅՅ օրենքի (այսուհետ՝ օրենք) 22-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կանոնների» (այսուհետ՝ կանոններ) 15-րդ կետի 2-րդ և 93-րդ կետի 2-րդ ենթակետերի համաձայն՝ թիվ 20080052 հայտով հայտատուի ծավալային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին նախնական որոշումը թողել է անփոփոխ, ՅՅ միջազգային պայմանագրերին համաձայն նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող ավելի վաղ առաջնությամբ՝ E. REMY MARTIN & C° ընկերության շփոթելու աստիճան նման IR 912806 միջազգային գրանցմամբ ծավալային ապրանքային նշանի առկայության պատճառով:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

Բողոքարկողը բերում է հայտարկված ծավալային ապրանքային նշանի արտաքին տեսքի նկարագրությունը և ընդգծում, որ գրանցմանը ներկայացված շշի վզիկը կարճ է, ուսերը՝ օվալաձև, իջնելով դրանք լայնանում են մինչև շշի ներքևի հատակային մասը: Շշի երկու կողմերում կան յուրահատուկ սիմետրիկ նախշեր, որոնք միանում են շշի հատակային մասում գտնվող փոքր կիսաշրջանին: Ինչ վերաբերում է փորձաքննության կողմից հակադրված E. REMY MARTIN & C° ընկերության անունով գրանցված շշին, ապա դա շփոթելու աստիճան նման չէ հայտարկվածին, քանի

որ առկա է դրանց նկատելի տարբերությունը, այն է՝ հակադրված շի վզիկը երկար է, շիշն ունի շրջանաձև տեսք և ամբողջությամբ պատված է նախշերով, որոնք միանում են շի մեջտեղում տեղադրված օվալաձև շրջանին, որը նախատեսված է պիտակի համար:

Բողոքարկողը կարևոր է համարել նաև նշել, որ իրենց կազմակերպությունը արդեն ունի գրանցված ծավալային նշան (ՀՀ վկ. դ. 10354), որն ունի ընդհանուր նմանություն հայտարկված ծավալային նշանի հետ:

Բողոքին կից ներկայացվել են հայտարկված ծավալային նշանի պատկերներ տարբեր հեռանկարային դիրքերով: Ներկայացվել է նաև տվյալ գործի վերաբերյալ VETROELITE S.p.A. ընկերության եզրակացությունը:

Բերելով իր փաստարկները բողոքարկողը խնդրել է վերանայել թիվ 20080052 հայտով ծավալային ապրանքային նշանի վերաբերյալ կայացրած գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշումը և գրանցել ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, ինչպես նաև VETROELITE S.p.A. ընկերության եզրակացության առկայությունը, բողոքարկման խորհուրդը համաձայնվեց բողոքարկողի փաստարկներին և գտնում է, որ թիվ 20080052 հայտով ծավալային ապրանքային նշանը ենթակա է գրանցման ԱՃՄԴ 33-րդ և 35-րդ դասերի հայտարկված ապրանքների և ծառայությունների նկատմամբ:

Ելնելով դրանից և ղեկավարվելով օրենքի 13-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 67-րդ կետի «ա» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել Արարատի մարզի կոնյակի գործարան «Ա.Կ.2.» ՍՊԸ-ի ընկերության 2008թ. մայիսի 20-ի բողոքն ամբողջությամբ, չեղյալ ճանաչել 2008թ. ապրիլի 15-ի կրկնական փորձաքննության որոշումը և գրանցել թիվ 20080052 հայտով ծավալային ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հայտարկված բոլոր ապրանքների և ծառայությունների նկատմամբ:

Բողոքարկման խորհրդի
Նախագահ

Ա.Ազիզյան